600.0224.20.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2019 թվականի №224Լ
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N239Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների և աշխատակիցների պարգևատրման կարգը հաստատելու մասին» №239Լ որոշման 1-ին կետով հաստատված կարգի՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Պարգևատրման ենթակա չեն այն Աշխատակիցները, ովքեր Հանձնաժողովի տարեկան աշխատանքային ծրագրի եռամսյակային կամ կիսամյակային, կամ տարեկան հաշվետու ժամանակահատվածում՝

1) ստացել են կարգապահական տույժ.

2) բացակայել են աշխատանքային ծրագրի ամփոփման ամբողջ ժամանակահատվածում՝ բացառությամբ ամենամյա նվազագույն, լրացուցիչ կամ որպես խրախուսման միջոց կիրառված լրացուցիչ վճարովի արձակուրդում գտնվելու, գործուղման կամ վերապատրաստման ժամանակահատվածի:»:

2) 12-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) ըստ աշխատած օրերի քանակի, եթե Հանձնաժողովում աշխատած ժամանակահատվածը պակաս է աշխատանքային ծրագրի ամփոփման ժամանակահատվածից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
20 հունիսի 2019թ.